# Ադրբեջանում ձերբակալվել են լրագրողներին ծեծի ենթարկած երկու անձնավորություն

Հունիս 28, 2011
Ադրբեջանում ձերբակալվել են լրագրողներին ծեծի ենթարկած երկու անձնավորություն
Arrest_110209.jpg [1]

Երկու հոգի, ովքեր ծեծի էին ենթարկել ամերիկացի լրագրող Ամանդա Էրիկսոնին և բրիտանացի մարդու իրավունքների պաշտպան Սելիա Դևիսին, ձերբակալվել են Բաքվի ոստիկանության աշխատակիցների կողմից: Այս մասին շաբաթ օրը Trend լրատվական գործակալությանը հայտնել է Ադրբեջանի Ներքին գործերի նախարարության մամլո ծառայությունը:

Հունիսի 15-ի լույս 16-ի գիշերը՝ 00:20-ի սահմաններում, Ադրբեջանի մայրաքաղաքի Յասամալ թաղամասում չորս անծանոթ մարդ ծեծի են ենթարկել երկու կանանց՝ բրիտանացի Սելիա Դևիսին և ամերիկացի Ամանդա Էրիկսոնին: [2]

Ձերբակալվածները 1993 թվականին ծնված Ադիլ Թագիզադեն և 1989 թվականին ծնված Ռոման Հասանովն է:

Ոստիկանները գիտեն նաև մյուս երկու անձանց անունները և գործողություններ են ձեռնարկել՝ նրանց ձերբակալելու նպատակով:

**Աղբյուր:** Trend.az **[3]**

## Թեմատիկ նյութեր

Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն, ոչ թե իրավունքի սահմանափակում» [4]
2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները [5]
ԼՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում [6]
Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ [7]
Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն [8]

**Source URL:** http://www.jnews.am/node/1351

**Links:**
[1] http://www.jnews.am/files/Arrest_110209.jpg
[2] http://jnews.am/node/1320
[3] http://en.trend.az/news/society/1897046.html
[4] http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan
[5] http://www.jnews.am/jff-studies-2012
[6] http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award
[7] http://www.jnews.am/mane-asryan
[8] http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek